Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

«11» ապրիլի 2024թ.

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-24/4» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑ «ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության (Այսուհետև՝ ՔԿ ծառայություն) կարիքների համար 2024թ.-ի ընթացքում ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով, գնանշման հարցման ձևով՝ 22.12.2023թ.-ին հայտարարվել է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-24/4» ծածկագրով գնման ընթացակարգ, որի հաղթող մասնակից է ճանաչվել «ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ն, և 08.02.2024թ.-ին կնքվել է ծառայությունների մատուցման պայմանագիրը: Սակայն, հետագայում պարզվել է, որ պայմանագրի կատարման ընթացքում Կատարողի կողմից թույլ են տրվել պայմանագրի պարտադիր պայմանների բազմակի խախտումներ, մասնավորապես.

1. ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կողմից ներկայացված տրանսպորտային միջոցի թերությունների ակտերը «ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ի կողմից տրամադրվել է Պայմանագրով սահմանված ժամկետների խախտումներով:
2. ՀՀ ԱՆ ՔԿ ծառայության կողմից ներկայացված տրանսպորտային միջոցների որոշ թերությունների ակտեր ընդհանրապես չէին ներկայացվել՝ մինչ պայմանագրի լուծման օրը:
3. Խախտվել են տրանսպորտային միջոցների պահման պայմանները, որոնք, ըստ պայմանագրի, պետք է լինեին տանիքածածկ և փակ տարածքում:
4. Խախտվել է նաև Պայմանագրով սահմանված տրանսպորտային միջոցը Կատարողի տեխսպասարկման կայանում ընդունելու ժամկետը:
5. Կատարողի կողմից, բազմիցս, ակտերի մեջ, ներկայացվել են չմատուցված ծառայություններ, որոնց որոշակի մասը բանակցությունների արդյունքում հեռացվել են:

Ելնելով վերոգրյալից, ՀՀ ԱՆ ՔԿ ծառայությունը **2024թ.-ի մարտի 26-ին, միակողմանի մասնակի լուծել է ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության և «ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ի միջև 08.02.2024թ.-ին կնքված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-24/4» ծածկագրով պայմանագիրը՝**

15 710 880,40 ՀՀ դրամ գումարի չափով, ինչպես նաև պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառվել են ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ն, սահմանված ժամկետում չի վճարել որակավորման և պայմանագրի ապահովման գումարներն, ուստի համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 1-ին մասի, 6-րդ կետի ա/ ենթակետի՝ «ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ին պետք է ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 2-րդ մասի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-24/4» ծածկագրով միակողմանի մասնակի լուծված պայմանագրի Կատարող՝ «ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ին, ներառել գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ստորև ներկայացվում է համապատասխան տեղեկատվությունը աղյուսակի տեսքով:

Մասնակցի				
Անվանումը	ՀՎՀՀ	Գործունեության հասցեն	Կնքված պայմանագրի միակողմանի լուծման իրավական հիմքը	Գնման ընթացակարգի ծածկագիրը
«ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ	00465342	Ք. Երևան, Ա. Ահարոնյան 22փ. Բն. 30	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 1-ին մասի, 6-րդ կետի ա/ ենթակետ. **Խախտել է պայմանագրով նախատեսված ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը և մասնակիցը սահմանված ժամկետում չի վճարել պայմանագրի և որակավորման ապահովման գումարը:**	«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-24/4»

ՏԻԳՐԱՆ ԻԳԻԹՅԱՆ